Հավելված N 5

Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2020 թվականի 05 փետրվարի N 22-Ա/Հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության և սույն կանոնադրություններով:

3. Նախարարը հաստատում և փոփոխում է Վարչության հաստիքացուցակը, որը ներկայացնում է Նախարարության գլխավոր քարտուղարը՝ համաձայնեցնելով Վարչության պետի հետ:

4. Վարչությունն իր գործառույթներն իրականացնում է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և գրասենյակների, ինչպես նաև Նախարարությանը ենթակա մարմնի, կազմակերպությունների և հիմնարկների հետ համագործակցելով:

5. Վարչությունը՝ Նախարարի, Նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակներում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, դրանց ստորաբաժանումների և գրասենյակների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

6. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրով: Վարչության աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր տարի հաստատում է Նախարարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգով: Վարչության տվյալ տարվա գործունեության ծրագիր-ժամանակացույցը հաստատում է Նախարարը:

7. Վարչությունը կազմված է՝

1) Ամփոփ վերլուծությունների բաժնից.

2) Մոնիթորինգի և գնահատման բաժնից:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության խնդիրներն են՝

1) մասնակցությունը սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական ծրագրերի մշակմանը, դրանց համակարգման ապահովումը,

2) սոցիալական պաշտպանության համակարգում գործող ծրագրերի և ծառայությունների՝ օրենսդրության պահանջների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման, մոնիթորինգի և գնահատման ապահովումը,

3) մասնակցությունը սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարմանը և համապատասխան տեղեկատվության վերլուծության ապահովումը,

4) սոցիալական պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքների, ամփոփ՝ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների կազմման ապահովումը,

5) Նախարարի, Նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների և հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը,

6) սոցիալական պաշտպանության ոլորտում մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրման և գործարկման ապահովումը:

III. ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Ամփոփ վերլուծությունների բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի մաս կազմող՝ սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող հատվածի մշակումը՝ համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանումների և գրասենյակների հետ,

2) կազմակերպում և ապահովում է սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփ վերլուծությունների և հաշվետվողականության գործընթացները՝ միտված ծրագրերի արդյունավետության բարձրացմանը,

3) իրականացնում է սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակային (ամփոփ) վերլուծությունները,

4) իրականացնում է սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական ծրագրերի ամփոփ հաշվետվությունների կազմումը և ներկայացումը,

5) մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական երկարաժամկետ (ռազմավարական) ծրագրերի մաս կազմող՝ սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող հատվածի մշակմանը և իրականացնում է վերլուծությունը և ամփոփումը.իրականացնում և համակարգում է ծրագրերի ու մատուցվող ծառայությունների մոնիթորինգային ցուցանիշների մշակման, ներդրման, դրանց հավաքագրման աղբյուրների և պարբերականության սահմանման աշխատանքները,

6) իրականացնում է Նախարարության ստորաբաժանումներից և գրասենյակներից, Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնից, Նախարարության համակարգում գործող հիմնարկներից և կազմակերպություններից, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում գործող այլ կազմակերպություններից պահանջվող՝ սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրումը, վերլուծությունն ու ամփոփումը և ներկայացումը.

7) օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է բյուջետային գործընթացին՝ յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի մշակում, միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի մշակում, վերլուծություն, ամփոփում և ներկայացում,

8) տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված դեպքերում կատարում է օրենսդրությամբ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչին վերապահված լիազորությունները,

9) կազմակերպում և ապահովում է սոցիալական պաշտպանության ոլորտի ոչ ֆինանսական՝ քանակական և որակական ցուցանիշների ամփոփ վերլուծությունների իրականացումը,

10) ներկայացնում է առաջարկություններ այլ պետական մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից մշակված՝ սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող ծրագրերը ոլորտի քաղաքականության նպատակներին համապատասխանեցման ապահովման վերաբերյալ,

11) մասնակցում է սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ, տեղեկատվության հավաքագրման այլ ձևեր) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը,

12) կազմում է սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ և տեղեկանքներ՝ համագործակցելով Նախարարության ստորաբաժանումների և գրասենյակների հետ,

13) սահմանված կարգով իրականացնում է Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքների գնահատումը,

14) կազմում է Նախարարության գործունեության տարեկան հաշվետվությունը՝ Նախարարության ստորաբաժանումների և գրասենյակների հաշվետվությունների վերլուծության, գնահատման և ամփոփման հիման վրա,

15) կատարում է Նախարարության ստորաբաժանումներից և գրասենյակներից ստացված՝ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող՝ իրենց բնագավառների ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների հավաքագրումը, վերլուծությունն ու ամփոփումը, ինչպես նաև ամփոփ հաշվետվությունների կազմումը,

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների նախագծի մշակման համար առաջարկությունների ներկայացման աշխատանքների համակարգումը, ամփոփ առաջարկությունների ներկայացումը, և սոցիալական պաշտպանության ոլորտում տվյալ տարվա միջոցառումների ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների կազմումը՝ համագործակցելով համապատասխան ստորաբաժանումների և գրասենյակների հետ,

17) Նախարարի հանձնարարությամբ կատարում է սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ վերլուծական և իրավիճակային հաշվետվությունների պատրաստումը,

18) վերլուծությունների տրամադրման միջոցով աջակցում է սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականությունների մշակմանը և մասնակցում է իրավական ակտերի նախագծերի քննարկմանը.

19) մասնակցում է սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացմանը, կատարում է դրա արդյունքում կազմված ակտերի, տեղեկանքների և եզրակացությունների վերլուծությունն ու գնահատումը, և ներկայացնում է համապատասխան առաջարկություններ,

20) մասնակցում է սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի կազմակերպմանը՝ իրականացնելով վերլուծություն և գնահատում, ինչպես նաև մասնակցելով ոլորտի իրավակիրառական պրակտիկայի մոնիթորինգին՝ կատարում է մոնիթորինգի արդյունքների վերլուծությունն ու գնահատումը,

21) մասնակցում է քաղաքացիների գրավոր դիմումների, բողոքների քննարկմանը, անհրաժեշտության դեպքում՝ կատարում է դրանցում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն և տրամադրում է համապատասխան պարզաբանումներ,

22) մասնակցում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, երեխաների տեղավորման, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների պահպանման մոնիթորինգին, ինչպես նաև պետական վերահսկողության իրականացմանը, կատարում է արդյունքների վերլուծությունն ու գնահատումը, ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.

23) մասնակցում է սոցիալական պաշտպանության ոլորտի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, կանանց հիմնահարցերի, պետական կենսաթոշակային ապահովության համակարգի, սոցիալական աջակցության, աշխատանքի և զբաղվածության, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի) տվյալների շտեմարանների ձևավորման ու վարման ուղղությամբ կատարվող աշխատանքներին, շտեմարաններում առկա տվյալների նկատմամբ իրականացվող մոնիթորինգին և կատարում մոնիթորինգի արդյունքների գնահատումը.

24) մասնակցում է պետական կենսաթոշակների և պետական նպաստների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակման, վերահաշվարկման, վճարման նկատմամբ մոնիթորինգին և կատարում արդյունքների գնահատումը,

25) մասնակցում է բնակչության զբաղվածության կարգավորման նպատակով, աշխատաշուկայի ձևավորված պահանջներին համապատասխան, զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգին և կատարում արդյունքների գնահատումը,

26) մասնակցում է պատվովճարի, պարգևավճարի նշանակման և վճարման օրենսդրության պահանջների պահպանման մոնիթորինգին և կատարում արդյունքների գնահատումը,

27) մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված սոցիալական աջակցության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի հավաստիության, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով փաստաթղթերի տրման հիմքերի ստուգմանը, վերլուծում ու գնահատում արդյունքները, ներկայացնում է համապատասխան առաջարկություններ,

28) ուսումնասիրում և վերլուծում է գերատեսչությունների, կազմակերպությունների, քաղաքացիների դիմումներում, բողոքներում և առաջարկություններում բարձրացված խնդիրները և անհրաժեշտության դեպքում տալիս համապատասխան եզրակացություն,

29) իրականացնում է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի ընթացիկ և վերջնական արդյունքների գնահատումը՝ ըստ նախապես սահմանված չափորոշիչների, բացահայտում է շեղումները և դրանց պատճառահետևանքային կապերը,

30) վերլուծությունների արդյունքում ձևավորում է առաջարկություններ՝ ուսումնասիրություն կամ վերահսկողություն իրականացնելու համար, և ներկայացնում Վարչության պետին,

31) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ համագործակցելով մասնակցում է Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում միջազգային և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի մշակման աշխատանքներին,

32) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ՝ մասնակցում է զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ լուսաբանման աշխատանքներին,

33) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության և ծրագրերի մշակման, իրականացման, վերլուծության, մոնիթորինգի և գնահատման հետ կապված այլ գործառույթներ,

34) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների հետ կապված այլ գործառույթներ:

IV. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Մոնիթորինգի և գնահատման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող ծրագրերի և բնակչությանը մատուցվող ծառայությունների օրենսդրության պահանջների նկատմամբ պետական վերահսկողությունը, այդ ծրագրերի և ծառայությունների մոնիթորինգը (մշտադիտարկում) և գնահատումը,

2) իրականացնում է պետական կենսաթոշակների, նպաստների, պատվովճարների, պարգևավճարների և սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում վճարվող այլ դրամական վճարների նշանակման, հաշվարկման

(վերահաշվարկման), վճարման գործընթացի, բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի օրինականության (համապատասխանությունը օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին) նկատմամբ պետական վերահսկողությունը, այդ ծրագրերի և ծառայությունների մոնիթորինգը (մշտադիտարկում) և գնահատումը,

3) իրականացնում է զբաղվածության պետական ծրագրերի, սոցիալական պաշտպանության ոլորտի պետական այլ ծրագրերի և սոցիալական ծառայությունների կատարման ընթացքի պետական վերահսկողությունը, այդ ծրագրերի ու ծառայությունների մոնիթորինգը (մշտադիտարկում) և գնահատումը,

4) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար իրականացվող սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի, հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական և սոցիալական վերականգնողական ծրագրերի, հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և այլ տեխնիկական միջոցներով ապահովելու պետական նպատակային ծրագրերի, անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ անձանց, այդ թվում՝ երեխաների համար իրականացվող սոցիալական աջակցության պետական ծրագրերի պետական վերահսկողությունը, մոնիթորինգը և գնահատումը,

5) իրականացնում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, երեխաների տեղավորման, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների պահպանման, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և տնային պայմաններում միայնակ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի իրականացման գործընթացի կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը, մոնիթորինգը և գնահատումը,

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված սոցիալական աջակցության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի հավաստիության ստուգում.

ներկայացնում է սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող ծրագրերին և ծառայություններին վերաբերող օրենսդրությունում լրացումների և փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ,

7) մասնակցում է սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրերի ու ծառայությունների մոնիթորինգային ցուցանիշների մշակման, դրանց հավաքագրման աշխատանքներին, իրականացված ուսումնասիրության և պետական վերահսկողության արդյունքների ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող ծրագրերի և ծառայությունների վերլուծությանը և գնահատմանը,

8) պատասխանում է քաղաքացիների դիմումներին, առաջարկություններում բարձրացված խնդիրներին, գերատեսչություններից և այլ կազմակերպություններից ստացված գրություններին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում և տրամադրում է պարզաբանումներ,

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սոցիալական պաշտպանության համակարգի ծրագրերի և ծառայությունների պետական վերահսկողության, մոնիթորինգի և գնահատման հետ կապված այլ գործառույթներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների հետ կապված այլ գործառույթներ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

11. Վարչության պետը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և անմիջական ղեկավարումը.

2) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է Վարչության կողմից նախապատրաստված Նախարարի հրամանների, այլ իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը.

3) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ՝ Վարչության աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

4) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիների ընդունելությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարում է քաղաքացիների ընդունելություն.

5) Նախարարին է ներկայացնում Վարչության տվյալ տարվա գործունեության ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայնեցնելով համակարգող տեղակալի հետ.

6) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագիրը.

7) իր լիազորությունների շրջանակներում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

8) իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Վարչության և այլ մարմինների փոխհարաբերությունները.

9) սահմանված կարգով ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

10) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

11) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, ըստ անհրաժեշտության, Վարչության աշխատանքներին

մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ.

12) իր լիազորությունների շրջանակներում, համաձայնեցնելով Նախարարության գլխավոր քարտուղարի հետ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

13) Նախարարի, Նախարարի տեղակալների կամ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին և խորհրդակցություններին.

14) իր լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, համապատասխան զեկուցումներ է ներկայացնում իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում.

15) իր լիազորությունների շրջանակներում տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ.

16) պատասխանատվություն է կրում Վարչության առջև դրված խնդիրների լուծման համար.

17) կատարում է Նախարարության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Նախարարի, Նախարարի տեղակալների, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

18) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

13. Վարչության աշխատողներն աշխատանքի ընդունվում և աշխատանքից ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Վարչության աշխատողներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իրենց պաշտոնների անձնագրերով նախատեսված

լիազորությունները, ապահովում են իրենց անմիջական ղեկավարների հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն կրում դրանք չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու համար: